ԲԱԺՆԵՏԵՐԵՐԻ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԵՎ ԱՌՑԱՆՑ ՆԵՐԿԱՅՈՒԹՅԱՄԲ ԺՈՂՈՎԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ԵՎ ՔՎԵԱՐԿԵԼՈՒ ԿԱՐԳԸ

Ընկերությունը ձեռնարկել է հնարավոր բոլոր միջոցները ապահովելու, որ Ընկերության բոլոր բաժնետերերը լիարժեք օգտվեն իրենց իրավունքներից՝ հնարավորինս դյուրին, անվտանգ և բազմազան եղանակներով: Մասնավորապես՝ ստեղծվել է հնարավորություն իրական ժամանակի ռեժիմում ժողովին առցանց կամ ֆիզիկապես մասնակցելու միջոցով հաղորդակցվելու և քվեարկելու: Ընկերությունը հնարավորություն է ընձեռել բաժնետերերին ընտրելու ժողովին մասնակցելու իրենց համար առավել նախընտրելի տարբերակը՝ ընդ որում անկախ մասնակցության եղանակից չբացառելով որպես բաժնետեր իրենց իրավունքներից օգտվելու հավասար հնարավորությունը:

ԺՈՂՈՎԻՆ ՖԻԶԻԿԱՊԵՍ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՆԱԼՈՒ ԿԱՐԳԸ

Այն բաժնետերերը, ովքեր ցանկանում են ֆիզիկապես ներկա գտնվել ժողովին, պետք է ոչ ուշ քան 2025 թվականի մայիսի 20-ը ներառյալ՝ սույն հղման միջոցով ուղարկեն ժողովին ֆիզիկապես մասնակցելու մասին հայտը: Ժողովի անցկացման սրահի հնարավորություններից ելնելով՝ ժողովին կարող են ֆիզիկապես ներկա գտնվել սահմանափակ թվով բաժնետերեր:

Ուստի՝ ժողովին ֆիզիկական ներկայությամբ մասնակցելու հնարավորություն կստանան միայն մինչև մայիսի 20-ը հղմամբ գրանցված անձինք:

Կարևոր է իմանալ

- Ժողովի մասնակիցներին խնդրում ենք մոտենալ մինչ ժողովի մեկնարկը՝ ժամը 15:00-ը, բայց ոչ շուտ քան մեկ ժամը:
- Ժողովին մասնակցող բաժնետերերը սրահի մուտքի մոտ պետք է գրանցվեն:
- Խնդրում ենք Բաժնետերերին ներկայանալ անձը հաստատող փաստաթղթով, ինչպես նաև, որպես ներկայացուցիչ ժողովին մասնակցելու պարագայում՝ ներկայանալ օրենքով սահմանված կարգով տրամադրված լիազորագրով կամ ներկայացուցչությունը հիմնավորող այլ փաստաթղթով:

ԱՌՑԱՆՑ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՆԱԼՈՒ ԿԱՐԳԸ

Եթե Բաժնետերը չի ներկայացրել ժողովին ֆիզիկապես մասնակցելու մասին հայտ, ապա կարող է ժողովին հետևել իրական ժամանակի ռեժիմում ՝ «Գուգլ Միթ» (Google Meet) ծրագրով, որին միանալու հղումը լրացուցիչ կուղարկվի Բաժնետիրոջ էլեկտրոնային փոստի հասցեին:

Կարևոր է իմանալ

- Ժողովին Գուգլ միթ հարթակով միացած Բաժնետերը պետք է հարթակի զրուցարան բաժնում անձնական նամակով մուտքագրի իր անունը, ազգանունը, հայրանունը և ՀԾՀ-ն (սոց.քարտի թվեր): Սույն գործողությունը չկատարած անձինք կդիտարկվեն չնույնականացված և կհեռացվեն զրուցարանից:

ԲԱԺՆԵՏԻՐՈՋ ՔՎԵԱՐԿԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

Ընդհանուր ժողովին մասնակցելու իրավունք ունեն բոլոր բաժնետերերը, անկախ տնօրինվող բաժնետոմսերի քանակից, ովքեր 2025 թվականի ապրիլի 30-ի դրությամբ ընդգրկված կլինեն բաժնետերերի ռեեստրում և կունենան բաժնետոմսերի անձնական հաշիվներ: Անկախ ֆիզիկական կամ առցանց մասնակցությունից բաժնետերը իրավունք ունի ստորև ներկայացված եղանակներով մասնակցել քվեարկությանը:

ԻՆՉՊԵ՞Ս ՔՎԵԱՐԿԵԼ

Բաժնետերերը կարող են օգտվել քվեարկելու հետևյալ տարբերակներից.

1. քվեաթերթիկը Ընկերության հասցեին կամ էլեկտրոնային փոստի հասցեին ուղարկելու միջոցով,
2. Ժողովին ֆիզիկապես ներկա բաժնետերերը կարող են քվեարկել ժողովի ընթացքում՝ լրացված քվեաթերթիկը Հաշվիչ հանձնաժողովի անդամներին հանձնելու միջոցով:

ՔՎԵԱԹԵՐԹԻԿԻ ՄԻՋՈՑՈՎ ՔՎԵԱՐԿԵԼԸ

1. Բաժնետիրոջ կողմից լրացված քվեաթերթիկը պետք է ուղարկվի info@telcell.am էլեկտրոնային հասցեին կամ թղթային եղանակով ներկայացվի Ընկերության գլխամաս՝ ՀՀ, Երևան, Հակոբ Հակոբյան 3, 1-ին սեկցիա 3-րդ հարկ հասցեով՝ անձամբ կամ փոստային եղանակով: Իսկ ժողովին ֆիզիկապես ներկա Բաժնետերերը կարող են քվեարկել ժողովի ընթացքում և լրացված քվեաթերթիկն ընդհանուր ժողովի ընթացքում հանձնել Հաշվիչ հանձնաժողովի անդամներին:
2. Քվեաթերթիկների միջոցով քվեարկության դեպքում հաշվառվում են ձայներն այն հարցերի վերաբերյալ, որտեղ քվեարկողի կողմից թողնված է քվեարկության միայն մեկ տարբերակ: Նշված պահանջի խախտմամբ լրացված քվեաթերթիկները համարվում են անվավեր և ձայների հաշվառման ժամանակ հաշվի չեն առնվում: Եթե քվեաթերթիկը բովանդակում է քվեարկության դրված մի քանի հարցեր, ապա նշված պահանջի խախտումը մեկ կամ մի քանի հարցի նկատմամբ չի բերում ամբողջ քվեաթերթիկի անվավեր ճանաչմանը:

Խնդրում ենք Ձեր կողմից լրացված քվեաթերթիկը հանձնել մինչև 2024 թվականի հունիսի 3-ի ժամը 24:00-ն: Դրանից հետո ստացված բոլոր քվեաթերթիկները քվեարկության արդյունքների ամփոփման համար հաշվի չեն առնվելու: Քվորումի հաշվարկման համար Ընկերության կողմից հաշվի են առնվում մինչև ժողովի մասնակիցների գրանցման ավարտի պահը (հունիսի 3-ի ժամը 15:00-ն) ստացված քվեաթերթիկներով տրամադրվող ձայները:

ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

Հաշվիչ հանձնաժողովը որոշում է ժողովի քվորումը, բաժնետերերին և նրանց ներկայացուցիչներին բացատրություններ է տալիս ժողովում օրակարգի հարցերի քվեարկման կարգի վերաբերյալ, ապահովում է քվեարկության սահմանված կարգը և բաժնետերերի՝ քվեարկությանը մասնակցելու իրավունքը, իրականացնում է ձայների հաշվարկը, ամփոփում է քվեարկության արդյունքները, դրանց վերաբերյալ կազմում է արձանագրություն և Ընկերության արխիվ է փոխանցում քվեաթերթիկները:

Ընկերության հաշվիչ հանձնաժողովի կողմից քվեարկության արդյունքների վերաբերյալ կազմվում է արձանագրություն:

Հաշվիչ հանձնաժողովի նախագահ՝

Լյուդմիլա Ղազարյան
(Կորպորատիվ քարտուղար, «ԹԵԼ-ՍԵԼ» ԲԲԸ)

Հաշվիչ հանձնաժողովի անդամներ՝

Վարդուհի Ֆարմանյան
(Իրավաբան, «ԹԵԼ-ՍԵԼ» ԲԲԸ)

Անդրանիկ Բարոյան
(Համապատասխանության, ռիսկերի և ներքին դիտարկումների բաժնի ղեկավար, «ԹԵԼ-ՍԵԼ» ԲԲԸ)

Զոյա Հովհաննիսյան
(Հաճախորդի փորձի ուսումնասիրման և սպասարկման որակի բարելավման բաժնի ղեկավար, «ԹԵԼ-ՍԵԼ» ԲԲԸ)

ԲԱԺՆԵՏԵՐԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՀԱՐՑԵՐ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ԿԱՐԳԸ

Յուրաքանչյուր Բաժնետեր իրավունք ունի գրավոր ներկայացնել մեկ կամ մի քանի հարց, որոնց պատասխանները կհրապարակվեն Ընկերության կայքում, ինչպես նաև կներկայացվեն ընդհանուր ժողովի ընթացքում՝ ստորև նկարագրված պայմաններով.

Հարցեր ներկայացնելը

Բաժնետերերը կարող են հարցերը սույն ծանուցման օրվանից մինչև 2025 թվականի հունիսի 2-ը ներառյալ ուղարկել info@telcell.am էլեկտրոնային փոստի

հասցեին, կամ փոստային եղանակով գլխավոր գրասենյակ՝ ուղղված Խորհրդի նախագահին:

Ժողովին ֆիզիկական մասնակցություն ունեցող Բաժնետերերը հարցեր ունենալու դեպքում ձևաթուղթը կարող են պահանջել Հաշվիչ հանձնաժողովի անդամներից և լրացվելուց հետո հանձնել Հանձնաժողովի ադնամներից մեկին:

Գրավոր հարցերը կարող են ներկայացվել նաև Գուգլ միթ հարթակում՝ ընդհանուր ժողովի ընթացքում:

Պատասխան կստանան միայն նշված ընթացակարգով ներկայացված հարցերը:

Բաժնետերերին խնդրում ենք պահպանել հետևյալ կանոնները.

- Պատասխան կստանան միայն Ընդհանուր ժողովի օրակարգին վերաբերող հարցերը,
- Ընկերությունը չի պատասխանի անձնական, հաճախորդների հետ կապված կամ առևտրային բնույթ ունեցող հարցերին,
- Պատասխան չեն ստանա վիրավորական կամ զրպարտիչ արտահայտություն պարունակող ցանկացած մեկնաբանություն կամ հարց,
- Պատասխան չի ստանա ցանկացած հարց, որը բավականաչափ հասկանալի կամ հստակ չէ,
- Բաժնետիրոջ պարտականությունն է ապահովել, որ հարցը լինի ընթեռնելի, պարզ և ձևակերպված լինի հասկանալի,

Հարցերն ըստ թեմաների խմբավորելուց հետո Ընդհանուր ժողովի ընթացքում կտրվեն հնարավորինս շատ հարցերի պատասխաններ: Ժողովի ընթացքում տրված հարցերի պատասխանները կհրապարակվեն Ընկերության կայքում: Այն հարցերը, որոնց չի հաջողվի պատասխանել ժողովի ընթացքում, դրանց պատասխանները նույնպես կհրապարակվեն Ընկերության կայքում:

Հարցերի տրման ձևաթուղթը հրապարկված է Ընկերության կայքում: